Լիճք

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 59 կմ,
Հեռավորությունը Մեղրի քաղաքից՝ 24 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1780 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ, լեռնային,

Կոչվել է նաև Լեշկին, Լեճկին, Լիճ, Լիճք, Շեշկերտ։ Գյուղը մտնում էր Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառի մեջ։ Գյուղից վեր կան մի քանի լճեր, որի համար էլ, ըստ տեղացիների, գյուղը անվանվել է Լիճք։ Գյուղը 1781թ. հարկացուցակով Տաթևի վանքին տարեկան վճարում էր 3350 դահեկան պտղի հարկ։
Գյուղի շրջակայքում կան պատմական հուշարձաններ՝ 17-րդ դարի կամուրջը Մեղրի գետի վրա, 17-րդ դարի Զվարավանի կոչվող եկեղեցին։ Շրջակայքում կան գյուղատեղիներ՝ Զվար, Թաղամիր, Մուլք անուններով։ Ղևոնդ Ալիշանը Լիճքն ու Լեշկինը համարում է տարբեր բնակավայրեր։
Տնտեսությունը
Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը։
Հողային և այլ բնական ռեսուրսներ
Հողեր (ընդամենը)՝ 8411 հա, այդ թվում՝
• Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2404 հա, որից՝
- վարելահող՝ 266 հա, խոտհարք՝ 19 հա, արոտ՝ 1004 հա, այլ հողատեսք՝1116 հա
• բնակավայրերի հողեր՝ 74 հա,
• արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 7 հա
• էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝26 հա
• հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 5563 հա,
• հատուկ նշանակության հողեր՝ 1 հա,
• անտառային հողեր՝ 309 հա, որից անտառածածկ՝ 78 հա
• ջրային հողեր՝ 28 հա